

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ, ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԵՎ ՉՄՇԱԿՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԱՄԱՍՏՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 դեկտեմբերի 2013թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Նովիաննիսյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Նայասրանի Նանրապետություն բնական գազի, նավթամթերքների եւ չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2013 թվականի դեկտեմբերի 12-ին ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հերազույելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Նայասրանի Նանրապետություն բնական գազի, նավթամթերքների եւ չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի դեկտեմբերի 2-ին՝ Երեւանում:

Համաձայնագրով սահմանվում է Նայասրանի Նանրապետություն առաքվող ապրանքների, դրանք են՝ նավթից արտադրված ապրանքների, գազածեւ վիճակում բնական գազի եւ բնական չմշակված ալմաստների մատակարարման ոլորտում Կողմերի համագործակցության պայմանները:

2. Համաձայնագրի 2-րդ հոդվածով սահմանվում են գործունեության համակարգումը եւ սույն Համաձայնագրի կատարման հսկողությունն իրականացնող հետեւյալ իրավասու մարմինները՝ Ռուսաստանի Դաշնության կողմից՝ ՌԴ Էներգետիկայի նախարարությունը (բնական գազի եւ նավթամթերքների առաքման մասով) եւ ՌԴ Ֆինանսների նախարարությունը (չմշակված բնական ալմաստների առաքման մասով), իսկ Նայասրանի Նանրապետության կողմից՝ ՆՏ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունը (բնական գազի եւ նավթամթերքների առաքման մասով) եւ ՆՏ Էկոնոմիկայի նախարարությունը (չմշակված բնական ալմաստների առաքման մասով):

3. Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունից Նայասրանի Նանրապետություն առաքվող ինդիկատիվ հաշվեկշիռների կազմում հաստատված ներքին սպառման ծավալներով ապրանքների նկատմամբ (բնական գազի եւ նավթամթերքների համար), ինչպես նաեւ չմշակված բնական ալմաստների համար Ռուսաստանի Դաշնությունը չի գանձում արտահանման մաքսապուրքեր:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները նախքան յուրաքանչյուր օրացուցային փարվա սկիզբը համաձայնեցնեն բնական գազի եւ նավթամթերքների ներքին սպառման ծավալներն ու անվանացուցակը Հայաստանի Հանրապետությունում հաջորդ օրացուցային փարվա համար եւ հաստատեն հաջորդ օրացուցային փարվա ինդիկատորի հաշվեկշիռները (այսուհետ՝ ինդիկատորի հաշվեկշիռներ)՝ Հայաստանի Հանրապետություն այդ ապրանքների առաքման կտրվածքով (հոդված 3, կետ 1),

- ապահովել, որպեսզի ՌԴ ավասար հանքարդյունահանող ձեռնարկությունները եւ ՌԴ ֆինանսների նախարարությանն առընթեր ՌԴ թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական հիմնադրամի ձեւավորման, թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պահպանման, բացթողման եւ օգտագործման Պետական հաստատությունը Հայաստանի Հանրապետության երեսակող ձեռնարկություններին առաքեն չմշակված բնական ավասարներ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության փոխադարձ սուբյեկտների միջեւ կնքված համապարասխան պայմանագրերով սահմանված կարգով եւ ծավալներով (հոդված 3, կետ 2),

- ստեղծել պայմաններ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության փոխադարձ սուբյեկտների (ռեզիդենտների) կողմից Ռուսաստանի Դաշնության փարածքից Հայաստանի Հանրապետություն սույն Համաձայնագրով նշված ապրանքների առաքման համար (հոդված 4),

- վճարել Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն արտահանվող փոխադարձ օրացուցային փարվա ինդիկատորի հաշվեկշիռներով նախատեսված քանակը գերազանցող բնական գազի եւ նավթամթերքների նկատմամբ արտահանման մաքսատուրքերը՝ սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին համապարասխան,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները յուրաքանչյուր եռամսյակ իրականացնեն Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն առանց արտահանման մաքսատուրքերի գանձման փաստացի առաքված եւ օգտագործված ապրանքների ծավալների, ինչպես նաեւ պայմանական հաշվեգրված արտահանման մաքսատուրքերի գումարների ստուգում

եւ կատարված սրուգման արդյունքների հիման վրա տեղեկացնեն ՆՏ եւ ՌԳ իրավասու մարմիններին դրանց վերաբերյալ (հոդված 5, կեր 4),

- ապահովել որպեսզի, Ռուսաստանի Դաշնությունից Նայաստանի Նանրապետություն առանց արտահանման մաքսավորքերի գանձման առաքվող ապրանքները չենթարկվեն վերաարտահանման երրորդ երկրներ,

- վերաարտահանման արգելքի ապահովման նպատակով Նայաստանի Նանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային մարմինների միջեւ համաձայնեցված կարգով համատեղ հսկողություն իրականացնել Ռուսաստանի Դաշնությունից Նայաստանի Նանրապետություն առանց արտահանման մաքսավորքերի գանձման առաքվող ապրանքների՝ բացառապես Նայաստանի Նանրապետության ներքին կարիքների համար օգտագործվող ապրանքների, նկատմամբ (հոդված 6, կեր 1):

- Նամաձայնագրով նախատեսված ապրանքների վերաարտահանման արգելքի խախտման դեպքում Ռուսաստանի Դաշնությանը վճարել վերաարտահանվող ապրանքների նկատմամբ ԱՄՆ դոլարով փոխհատուցման գումարներ, որոնք համարժեք կլինեն խախտման փաստի հայրնաբերման օրվա դրությամբ Ռուսաստանի Դաշնությունում գործող արտահանման մաքսավորքերի ծավալներին (հոդված 6, կեր 3),

- վճարել Նամաձայնագրի 6-րդ հոդվածի 3-րդ կետում նշված փոխհատուցման գումարը Ռուսաստանի Դաշնության օգտին՝ դրամական տեսքով՝ ՌԳ իրավասու մարմնի կողմից դիվանագիտական ուղիներով ՆՏ իրավասու մարմնին վերաարտահանման փաստի հայրնաբերման մասին եւ Ռուսաստանի Դաշնությանը վերաարտահանվող ապրանքների համար արտահանման մաքսավորքերի վճարման պահանջի վերաբերյալ գրավոր ծանուցումը ներկայացնելուց ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 6, կեր 4):

Փոխհատուցման նշված գումարը (այն մասով, որով այդ գումարը սույն Նամաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ կերպին համապատասխան չի փոխարինվել Նայաստանի Նանրապետություն առաքվող ապրանքի համարժեք նվազեցմամբ) չվճարվելու դեպքում այն համարվում է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Նայաստանի Նանրապետության պետական պարտք, որին՝ Նամաձայնագրի 6-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված փոկոսադրույքի հաշվարկման կարգին համապատասխան, հաշվեգրվում են փոկոսներ,

- Նամաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի գործողության դադարեցման կամ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ Նամաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Ռուսաստանի Դաշնությանը վճարել փոխհատուցման գումար, որը համարժեք է Ռուսաստանի Դաշնությունից առանց արտահանման մաքսապուրքերի գանձման Նայաստանի Նանրապետություն առաքված ապրանքների համար Ռուսաստանի Դաշնության կողմի չսրացած՝ պայմանական հաշվեգրված արտահանման մաքսապուրքերի գումարին:

Նշված փոխհատուցման գումարը ենթակա է վճարման Նամաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառման դադարեցման ամսաթվից 30 օրացուցային օրվա ընթացքում: Իսկ փոխհատուցման գումարը չվճարելու դեպքում այն համարվում է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Նայաստանի Նանրապետության պարտք, որին հաշվեգրվում են փոկոսներ՝ սույն Նամաձայնագրի 9-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված կարգով եւ չափով:

5. Նամաձայնագրի 7-րդ եւ 8-րդ հոդվածներում նախատեսված են դրույթներ Կողմերի միջև վեճերը բանակցությունների միջոցով կարգավորելու, ինչպես նաև Նամաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ: Նամաձայնագրի 9-րդ հոդվածով սահմանված են նաև Նամաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ կիրառման պայմանները:

6. Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Նամաձայնագրում հղում է կատարվում՝ Նայաստանի Նանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ներդրումների խրախուսման եւ փոխադարձ պաշտպանության մասին 2001 թվականի սեպտեմբերի 15-ի համաձայնագրին (Նայաստանի Նանրապետությունը վավերացրել է 2005 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ՆՆ Ազգային ժողովի Ն-241-3 որոշմամբ), Նայաստանի Նանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության մասին 1997 թվականի օգոստոսի 29-ի պայմանագրին (Նայաստանի Նանրապետությունը վավերացրել է 1998 թվականի փետրվարի 2-ին՝ ՆՆ Ազգային ժողովի Ն-221-1 որոշմամբ):

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Երեսնամյա ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքների եւ չմշակված բնական ալմաստների առաքման ոլորտում համագործակցության վերաբերյալ համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

19 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1133